

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԸ

Յուրգեն Գիսպերտի, Քրիստիան Կոլտերի և Ժիրայր Քոչարյանի
բաց նամակները Բունդեսթագի պատգամավորներին*

Մուտք

«20-ամյա հակամարտություն Լեռնային Ղարաբաղի շուրջ. նոր ազդակ հակամարտության խաղաղ կարգավորման համար» վերնագիրը արթնացնում է մեծ սպասումներ, քանի որ մինչև այսօր այդ հարցով զբաղված միջազգային և ազգային հանձնաժողովներից ոչ մեկին չի հաջողվել դարաբաղյան հակամարտությանը քաղաքական (և ըստ այդմ՝ խաղաղ) լուծում տալ: Ուստի ընթերցողը մեծ հետաքրքրությամբ է սկսում կարդալ գերմանական երկու կառավարող կուսակցությունների՝ պահպանողական CDU-/CSU-ի Բունդեսթագի խմբակցության՝ 2012 թ. փետրվարի 7-ին հրապարակված դիրքորոշման թուղթը: Այն հեղինակվել է այդ խմբակցության Արտաքին քաղաքական հարցերի աշխատանքային խմբի կողմից: Սակայն ընթերցման ժամանակ մեր սպասումը շուտով տեղի է տալիս հուսախաբության և նույնիսկ վրդովմունքի, որովհետև պարզվում է՝ այստեղ ակնհայտ կերպով ելակետային դեր է խաղացել Կենտրոնական Եվրոպայի կամ պարզապես Գերմանիայի էներգաքաղաքական կարիքների բավարարման հիմնանպատակը: Սա էր երկար ժամանակ հրճվանք պատճառում աղբբեջանական

Գ (Ժ) քաղթ, թիվ 1 (37) հունվար-մարտ, 2012

վեբ համահայկական հանդես

*«Վեմ»-ի խմբագրությունը Բեռլին Ազատ համալսարանի դասախոս, վաստակաշատ հայագետ, դր. Թեսաս Յոֆմանից ստացել է Գերմանիայի Բունդեսթագի «Քրիստոնեա-դեմոկրատական միություն»- «Քրիստոնեա-սոցիալական միություն» խմբակցության (CDU-/CSU) Արտաքին քաղաքական հարցերի աշխատանքային խմբի կազմած «20-ամյա հակամարտություն Լեռնային Ղարաբաղի շուրջ. նոր ազդակ հակամարտության խաղաղ կարգավորման համար» դիրքորոշում արտահայտող թուղթը, որն արդեն հարուցել է Գերմանիայի մի շարք գիտնականների դժգոհությունը: Գերմանացի նշանավոր հայագետը, մեզ ուղարկելով ակնհայտորեն թուրք-աղբբեջանական լրբբինգի ծնունդը հանդիսացող այդ գրությունը, միաժամանակ տեղեկացրել է, որ իր գործընկերները քաղաքագետ Քրիստիան Կոլտերը, էթնոլոգ Յուրգեն Գիսպերտը և դր. Ժիրայր Քոչարյանը բողոքի նամակներ են հղել գերմանացի օրենսդիրներին, որոնցում տրվում են Ղարաբաղյան հակամարտության պատմության ու ներկա վիճակի գիտական գնահատականները: «Վեմ»-ի խմբագրությունը տպագրում է ինչպես գերմանական օրենսդիրների կազմած թուղթը, այնպես էլ Գերմանիայից ստացված բողոքի գրությունները, որոնց հասցեատերն են Բունդեսթագի CDU/CSU խմբակցության Արտաքին քաղաքական հարցերի աշխատանքային խմբի նախագահ Ֆիլիպ Միսֆելդերը և նրա անդամները: Գիտնականների բողոքին իրենց աջակցությունը հայտնելու համար մեր ընթերցողները նույնպես կարող են դիմել Ֆիլիպ Միսֆելդերին՝ նրա էլեկտրոնային՝ E-Mail: philipp.missfelder@bundestag.de կամ փոստային հասցեներով. Platz der Republik 1, 11011 Berlin. Խմբ.: *Ընդունվել է տպագրության 25.03.2012:

լրատվամիջոցներին...

Գերմանական որոշ համալսարանականներ արդեն քննադատաբար և հրապարակայնորեն զբաղվել են այս փաստաթղթով:

1.Քաղաքագետ **Քրիստիան Կոլտերը** աշխատում է Լայպցիգի համալսարանում, պաշտպանել է ատենախոսություն Ռուսաստանի արտաքին քաղաքականության, ինչպես նաև հետխորհրդային շրջանի այսպես կոչված՝ «սառեցված» տարածքային հակամարտությունների (Աբխազիա, Հարավային Օսեթիա և Լեռնային Ղարաբաղ) թեմայով: Նա իր հետազոտության շրջանակներում այցելել է Լեռնային Ղարաբաղ:

2.Նրա գործընկեր **Յուրգեն Գիսպերտը**, որը նմանապես Լայպցիգի համալսարանում է աշխատում, մասնագիտությամբ էթնոլոգ է:

3.Դ-ր. **Ժիրայր Քոչարյանը**, որն ամենամեծ գերմանական համալսարանում՝ Բեռլինի Ազատ համալսարանում, դասավանդում է գրաբար և ժամանակակից հայերեն, Գերմանիայի քաղաքացի է և 1991-ից հետո, ընդհանուր առմամբ, 51 անգամ այցելել է Լեռնային Ղարաբաղ՝ իր նախնիների հայրենիքը, մեծ մասամբ որպես բարոնուհի Քերոլայն Քոկսի կողմից դեկավարվող մարդասիրական առաքելությունների անդամ: Այսինքն՝ լավ է ճանաչում այդ տարածաշրջանն ու նրա՝ թե՛ պատերազմական և թե՛ խաղաղ ժամանակահատվածներին հատուկ հիմնախնդիրները:

Ստորև հրապարակվող բաց նամակները ուղարկվել են Բունդեսթագի CDU/CSU խմբակցության Արտաքին քաղաքական հարցերի աշխատանքային խմբի բոլոր անդամներին: Մինչև այսօր, սակայն, նրանցից ոչ մի արձագանք չի ստացվել:

Դ-ր. Թեսսա Հոֆման
(Բեռլինի Ազատ համալսարան, Արևելյան Եվրոպայի ինստիտուտ)

20-ԱՄՅԱ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՇՈՒՐՋ. ՆՈՐ ԱԶԳԱԿ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԽԱՂԱՂ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ

Շարադրված գործավարի կողմից 2012 թ. մարտի 5-ին, ժամը 23.32-ին:

**Բունդեսթագի CDU/CSU խմբակցության Արտաքին քաղաքական հարցերի
աշխատանքային խմբի դիրքորոշումն արտահայտող փաստաթուղթ:**

Խորհրդային միության փլուզումից հետո հայերի և աղբյուրացիների միջև շարունակաբար ի հայտ եկող էթնիկական տարբերությամբ պայմանավորված բռնությունների գործադրումից հետո, որոնք երկու ազգերի փախստականների մեծ հոսքեր առաջացրին, Լեռնային Ղարաբաղի շուրջ հակամարտությունը 1992-

ին հանգեցրեց աղբբեջանցիների և հայերի միջև արյունոտ ընդհարումների, որոնց գոհ դարձան տասնյակ հազարավոր մարդիկ: Ի վերջո, հայկական զինված ուժերին 1993-ին հաջողվեց մուտք գործել դեպի Հայաստանի Հանրապետություն տանող արևմտյան միջանցքը: Նախկին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզին արևելքից և հարավից սահմանակցող աղբբեջանական շրջանները նույնպես ընկան հայկական զորքերի հսկողության ներքո:

Ըստ գնահատումների՝ այդ պատերազմում սպանվեց 25.000 մարդ, մեկ միլիոն մարդիկ վտարվեցին իրենց հայրենիքից և հարկադրված էին փախստական դառնալ: Հայկական զինված ուժերը այդ պատերազմի արդյունքում գրավեցին ոչ միայն Լեռնային Ղարաբաղը, որը կազմում է Աղբբեջանի պետական տարածքի մոտ 5 տոկոսը, այլև շրջակա 7 աղբբեջանական շրջաններ: Աղբբեջանի պետական տարածքի մասը կազմող շրջանների ռազմական նվաճումը 1993-ին դատապարտվեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից: Ներկայումս աղբբեջանական պետության տարածքի ընդհանուր առմամբ՝ 20 տոկոսը գտնվում է հայերի վերահսկողության ներքո:

Միջազգային հանրությունը Լեռնային Ղարաբաղը միջազգային իրավունքի տեսակետից շարունակում է դիտել որպես Աղբբեջանի Հանրապետության տարածքի անբաժանելի մաս: Ընդամին Գերմանիայի, ինչպես և Եվրոպական Միության դիրքորոշումն այնպիսին է, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության տևական լուծումը կարող է միայն խաղաղ ճանապարհով իրականացվել: Ո՛չ Գերմանիան, ո՛չ ԵՄ-ն չեն ճանաչել 2010-ին Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունները:

Արդեն 1992-ին՝ պատերազմի բռնկումից հետո, ԵԱՀԿ-ի շրջանակներում, այսպես կոչված՝ «Մինսկի խումբը» ջանում է լուծում գտնել այդ սառեցված հակամարտության համար: Չնայած 20 տարի ի վեր շարունակվող միջնորդության փորձերին՝ ստատուս քվոն հաղթահարելու բոլոր ջանքերն առայսօր մնացել են անպտուղ: 1994 թ. մայիսից հաստատված զինադադարի գծի մոտ շարունակաբար տեղի են ունենում զինված միջադեպեր, որոնք ավարտվում են անմեղ մարդկանց մահով: Օրինակ՝ 2011 թ. հոկտեմբերին զինադադարի գծի մոտ տեղի ունեցած մի փոխիրաձգության ժամանակ սպանվեցին երկու աղբբեջանցի զինվորներ: 2011 թ. մարտի սկզբին հայ դիպուկահարները սպանեցին մի 9-ամյա աղբբեջանցի երեխայի՝ զինադադարի գծի վրայով կատարված նշանառու կրակոցներով: 2010 թ. հունիսին մեկ այլ միջադեպի ժամանակ սպանվեցին չորս հայ և մեկ աղբբեջանցի զինվորներ: Նման միջադեպերը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի գրավումը ոտնահարում են միջազգային իրավունքից բխող պարտավորությունները: Միացյալ Ազգերի կազմակերպության հիմնական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ բոլոր անդամները պարտավորված են իրենց ազգամիջյան վեճերը հարթել խաղաղ միջոցներով, որպեսզի համաշխարհային խաղաղությունը, միջազգային անվտանգությունը և արդարությունը չվտանգվեն: Միացյալ Ազգերի կազմակերպության բոլոր անդամ պետություններն իրենց ազգամիջյան հարաբերություններում պետք է ձեռնպահ մնան ուժի կիրառումից, տարածքային անձեռնմխելիության կամ մի պետության քաղաքական անկախության դեմ ուղղված և կամ առհասարակ՝ ՄԱԿ-ի նպատակներին անհամատեղելի որևէ սպառնալիքից կամ դրա գործադրումից:

Հակամարտությունն այնքան ծանրակշիռ բնույթ ունի, որ արտգործ-

հունվար-մարտ, 2012
Գ (Գ) քաղթ, քիվ 1 (37)

վեմ համահայկական հանդես

նախարարությունը նախագուշացնում է դեպի Լեռնային Ղարաբաղ ճանապարհորդություններ կատարելուց: Արտգործնախարարությունը այն ճանապարհորդներին, որոնք կմեկնեն Լեռնային Ղարաբաղ, ոչ մի գերմանական արտասահմանյան ներկայացուցչության միջոցով չի կարող հյուպատոսական օգնություն կամ աջակցություն ցուցաբերել:

Ողջ տարածաշրջանում առկա է սպառազինության մի մրցավազք, որը հիմք է տալիս երկյուղելու հետագա բռնկումներից: Հայաստանի և Ադրբեջանի սպառազինության ծախսերը անցյալ տարիներին շարունակաբար աճում էին: Ադրբեջանում պաշտպանությանը հատկացվող ծախսերը կազմում են ամբողջ պետբյուջեի 20 տոկոսը: Հայաստանը 2010 թ. օգոստոսին Ռուսաստանի հետ ստորագրեց մի համաձայնագիր ավելի ուժեղացված ռազմական համագործակցության վերաբերյալ: Ռուսաստանը Հայաստանում պահում է սեփական ռազմաբազաներ:

Տարածաշրջանը շարունակաբար ավելի ու ավելի մեծ դեր է խաղում Եվրոպային Էներգիայի մատակարարման հարցում: Եվրոպական Միության Էներգիայի քաղաքականության առանցքային նպատակներից մեկն է Եվրոպային զազի մատակարարումների դիվերսիֆիկացումն ու տնականորեն ապահովագրելը զազամատակարարումների և զազամուղերի վերաբերյալ համաձայնագրերի (գործիմակ՝ Ադրբեջանի հետ) միջոցով:

Հակամարտության 20-ամյա տարելիցը պետք է շարժառիթ ծառայի հակամարտության կարգավորման մինչաշտմյան ձևերը կշռադատման ենթարկելու և կարգավորման գործընթացին նորովի ձեռնամուխ լինելու համար: Հակամարտության խաղաղ կարգավորումը և հարաբերությունների նորմալացումը անմիջականորեն՝ դրական տնտեսական և հասարակական ազդակներ առաջ կբերեն ողջ տարածաշրջանում: Գերմանական Բունդեսբազի CDU/CSU խմբակցության՝ Արտաքին քաղաքական հարցերի աշխատանքային խմբի անդամներն, այդ պատճառով, Գաշնային կառավարությանը կոչ են անում՝

1. ԵԱՀԿ-ի, ՆԱՏՕ-ի և ՄԱԿ-ի մեր բարեկամների հետ միասին կրկին ավելի մեծ ուշադրություն հատկացնել Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը և, ըստ այդմ, դրա կողմերի հետ բոլոր գրույցներում ու երկկողմ հանդիպումներում ընդգծել հակամարտության խաղաղ կարգավորման նպատակով քաղաքական փոխզիջումների գնալու, զինադադարի գծի մոտ ապրող բնակչությանը անվտանգության երաշխիքներ տրամադրելու և փոխադարձ վստահության ձեռքբերման անհրաժեշտությունը:
2. Պահանջել, որ ԵՄ-ն ավելի մեծ դերակատարում ունենա հակամարտության լուծման մեջ, ազդեցություն գործադրել, որպեսզի ԵՄ-ն, որպես մեկ ամբողջություն, ստանձնի Ֆրանսիայի դերը «Միմսկի խմբում», Հարավային Կովկասում ԵՄ-ի լիազոր ներկայացուցչին տրամադրել մի հստակ մանդատ՝ հակամարտող կողմերի միջև միջնորդելու համար:
3. Արևելյան գործընկերության շրջանակներում հետազայում ևս ամեն բան ձեռնարկել՝ Հայաստանը և Ադրբեջանը քաղաքական և տնտեսական առումով միմյանց մերձեցնելու և տարածաշրջանային հակամարտության լուծումը որպես դրա բաղադրիչ ամրագրելու համար:
4. Մեր գործընկեր Ռուսաստանին Լեռնային Ղարաբաղի հակամարտու-

քյան կարգավորման հարցում մղել ավելի կառուցողական դերակատարման, որը հենվում է ոչ թե ստատուս քվոյի պահպանման, այլ տարածաշրջանում սպառազինության մրցավազքի ավարտման և հարցի տևական կարգավորման վրա:

5. Լեռնային Գարաբաղի հակամարտությունում կոնկրետ առաջընթացի համար «Մեզերերգի հուշագրին» համանման կերպով՝ Ռուսաստանին ներկայացնել ԵՄ-Ռուսաստան քաղաքական անվտանգության բնութաբանող երկխոսության իրականացման անհրաժեշտությունը:
6. ԵՄ-ի անդամակցության թեկնածու Թուրքիային մղել Հայաստանի հետ իր հարաբերությունները նորմալացնելուն, որպեսզի ռուսական բանակի՝ հայկական կողմից անհրաժեշտ համարվող ռազմական հենակետերը ավելորդ դառնան, օրինակ՝ Թուրքիայի հետ սահմանի պահպանության հարցում, և այդպիսով առանցքային ներդրում կատարվի Հարավային Կովկասում սպառազինության մրցավազքի ավարտման համար:
7. Միաժամանակ՝ Թուրքիային աջակցել, որպեսզի նա Լեռնային Գարաբաղի հակամարտության լուծման հարցում կառուցողական դերակատարում ունենա և տեր լինի այդ տարածաշրջանում իր պատասխանատվությանը:

ԼՐԱՏՈՒՄ

Դ (Ժ) քաղթ, թիվ 1 (37) հունվար-մարտ, 2012

ՅՈՒՐԳԵՆ ԳԻՍՊԵՐՏԻ ԵՎ ՔՐԻՍՏԻԱՆ ԿՈՆՏԵՐԻ ԲԱՅ ՆԱՄԱԿԸ՝

«20-ամյա հակամարտություն Լեռնային Գարաբաղի շուրջ. նոր ազդակ հակամարտության խաղաղ կարգավորման համար»
փաստաթղթի վերաբերյալ

Յուրգեն Գիսպերտ (էթնոլոգ, juergengispert@web.de),
Քրիստիան Կոլտեր (ungիոլոգ, ch_kolter@yahoo.de)

Լայպցիգ, 08.03.2012

Բունդեսթագի CDU/CSU խմբակցության՝
Արտաքին քաղաքական հարցերի աշխատանքային խմբին
Պարոն Ֆիլիպ Միսֆելդերին (նախագահ)
Հանրապետության հրապարակ 1,
11011 Բեռլին

Բունդեսթագի CDU/CSU խմբակցության Արտաքին քաղաքական հարցերի աշխատանքային խմբի՝ «20-ամյա հակամարտություն Լեռնային Գարաբաղի շուրջ. նոր ազդակ հակամարտության խաղաղ կարգավորման համար»՝ դիրքորոշում արտահայտող փաստաթղթի շուրջ

ՎԵՄ համահայկական հանդես

Հարգելի պարոն Միսֆելդեր, Բունդեսբազի CDU/CSU խմբակցության հարգելի անդամներ

Մենք զարմանքով և հիասթափությամբ ենք արձանագրում, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ Բունդեսբազի CDU/CSU խմբակցության Արտաքին քաղաքական հարցերի աշխատանքային խմբի ընդունած՝ դիրքորոշում արտահայտող թուղթը (ընդունված 07.02.2012-ին) ինչպես իր բովանդակությամբ, այնպես էլ հրապարակման հանգամանքներով վերստին հաստատում է Ադրբեյջանի ղեկավարության հետ գերմանական կառավարական շրջանների թափանցիկ-լոբբիստական և սեփական գավառամիտ ու կարճատես շահերի հետապնդումից այն կողմ չանցնող՝ համագործակցության փաստը, որին արդեն անդրադարձել է «Der Spiegel»-ի լուրերի բաժինը:

Ըստ այնտեղ նկարագրված իրողությունների՝ որոնք երկկողմ տեղեկատվական քաղաքականության արդյունքում շրջանցել են հրապարակայնությունը, մեզ տեսնում ենք առճակատված այն արտառոց փաստի հետ, որ այս փաստաթուղթը սկզբում Ադրբեյջանի արտգործնախարարության միջոցով տարածվել է ադրբեյջանական, որից հետո՝ հայկական և ռուսական լրատվամիջոցներում, մինչդեռ գերմանական ՁԼՄ-ներում, նաև՝ Չեր կայքէջում, ավելի քան երկու շաբաթ շարունակ այդ մասին ոչինչ չի հրապարակվել: Այս ընթացքում կատարված ուղղումը՝ Չեր դիրքորոշումն արտահայտող այդ փաստաթղթի հրապարակումը, բոլորովին չի նվազեցնում վերջինիս ընդգրկուն սրբագրման անհրաժեշտությունը:

Եթե մարդու իրավունքների հարցերում գերմանա-ադրբեյջանական համագործակցությունը (ինչի մասին վկայում է ոչ միայն «Der Spiegel»-ի հրապարակումը) անտեսման և երկակի բարոյականության մտահոգիչ ստվեր է նետել գերմանական կառավարող կուսակցությունների դիվանագիտական սովորույթի վրա, ապա այն բացասական ազդեցությունները, որոնք ի հայտ են գալիս Չեր դիրքորոշման թղթի դրույթներից և նրանցում առկա քողարկված բանաբաղումներից, ցավոք, մեծ ընդգրկում են ստացել:

Մենք այս բաց նամակը գրում ենք Չեզ, քանի որ մի կողմից ելնում ենք այն հանգամանքից, որ Դուք հավակնում եք գիտակցելու, թե ինչ եք անում, և մյուս կողմից, քանի որ մենք (դեռևս) չենք հավատում, թե Դուք փաստորեն հետևում եք Չեր փաստաթղթի բոլոր դիրքորոշումներին, և առավել ևս՝ հավանությամբ եք վերաբերվում դրանց հնարավոր հետևանքներին:

Չեր կողմից ձևակերպված դիրքորոշումները մի կողմից հնարավորինս համառոտ և ակնառու և մյուս կողմից՝ անհրաժեշտ չափով ճշգրիտ վերլուծելու և մեկնաբանելու համար մենք կհետևենք Չեր տեքստի հատվածներին ու կետերին, ընդ որում՝ այդ կերպ ակնհայտ կդառնա Չեր լիովին միակողմանիացված աջակցությունը ադրբեյջանական ռեժիմին, Ղարաբաղի հարցում նրա կողմից թելադրվող տեսակետներին, ինչպես նաև կբացահայտվեն փաստաթղթում տեղ գտած մյուս՝ գրեթե սահմնկեցուցիչ սխալները:

Առաջին հատվածում կապ է ստեղծվում ԽՍՀՄ-ի կազմալուծման և հայերի ու ադրբեյջանցիների միջև բռնությունների սանձազերծման միջև: Այդպիսով՝ ստեղծվում է այն տպավորությունը, թե հակամարտության ծավալման սկզբնական պատճառը ԽՍՀՄ-ի կազմալուծումն է եղել: Բացի այդ, «էթնիկական հիմքեր ունեցող» հավելումը ներշնչում է այն միտքը, թե ԽՍՀՄ-ի լուծարումը 70 տարի

շարունակ քնած հակամարտություն է արթնացրել, ինչը պայմանավորված էր հնամենի փոխադարձ ատելությամբ, որն այլ հիմքեր չունի, քան էթնիկական տարբերության պատճառով մեկի կողմից մյուսին թշնամի հայտարարելը:

Լեռնային Ղարաբաղի շուրջ հայ-ադրբեջանական հակամարտությունը փաստացիորեն 100 տարուց ավելի վաղեմություն ունի ու նախ և առաջ կապված է շատ ուշ և պանթուրքական նկարագրով ձևավորված Ադրբեջանի ժողովրդի հետ (սա չի կարելի շփոթել հյուսիսիրանական Ադրբեջանում քաղաքական ինքնության հետ), որտեղ հայերը, որպես հայեր, չէին կարող մուտք գործել առանց մեծամասշտաբ խտրականությունների ենթարկվելու (Ադրբեջանում դեռևս պահպանված ազգային փոքրամասնությունները ներկայումս անգամ հարկադրված են ընտրություն կատարել խտրականության և իրենց ինքնությունից հրաժարվելով՝ ձուլման ենթարկվելու միջև):

Այդ խտրական դրությունը Ղարաբաղի հայերի համար չփոխվեց նաև խորհրդային ժամանակներում, այնպես որ արտուրդ է հակամարտության սկիզբը 1988 թվականը համարելը կամ խորհրդային շրջանում արդեն կարգավորված հակամարտության մասին խոսելը: 1921-ից 1988 թվականներին ոչ մի դեպքում չէին բացակայում հակամարտության դրդապատճառները, այլ նախ և առաջ՝ այդ հակամարտության մեջ Ղարաբաղի հայերի ժողովրդավարական եղանակով արտահայտվելու հնարավորությունները (որը չէր բացառում խորհրդային ողջ ժամանակահատվածում բազմաթիվ դիմումների և ուղերձների առաքումը), ինչը հեռվից կարող էր այն սխալ տպավորությունը ստեղծել, թե Ղարաբաղի հայերը հարմարվել են Ադրբեջանի տարածքին իրենց հարկադիր միացման հետ:

Դրան հակառակ, 1988-ից բռնությունների սանձազերծումը Ձեր կողմից այնպես է ներկայացվում, թե իբր՝ պարզապես վերացել էր երկու կողմերի անվտանգությունը: Պետք է, սակայն, ավելի մանրակրկիտ հայացքի դեպքում աչքի գարնի, որ Ադրբեջանը «Վերակառուցման» ժամանակ Ղարաբաղի հայերի կամքի ժողովրդավարական արտահայտմանը (դիմումներ, ուղերձներ, ցույցեր) թյուրիմացությամբ չէր բռնությամբ արձագանքում (կոտորածներ, վտարումներ, հափշտակություններ), այլ առնվազն՝ 1991-ից նրանց արտաքին աշխարհից մեկուսացրեց և պատերազմ պարտադրեց:

Այն, որ հակամարտության ընթացքում նաև շատ ադրբեջանցիներ են զրկանքներ կրել, այստեղ չի կարող և չպետք է ժխտվի, սակայն դա պարզորոշ կերպով վերաբերում է պատերազմի հետևանքներին, որի համար գլխավոր պատասխանատվությունը կրում է ադրբեջանական ղեկավարությունը՝ ոչ վերջին հաշվով այն պատճառով, քանի որ նա (բացառությամբ այն պահի, երբ անշրջելի պարտություն կրեց) երբեք հարկ չհամարեց բանակցել Ղարաբաղի հայերի հետ, այսինքն՝ առհասարակ նրանց դիտարկել և ընդունել որպես քաղաքական սուբյեկտ:

Երկրորդ պարբերությունում Դ-ուք, ինչպես, ցավոք, առհասարակ վարվում են զանգվածային լրատվամիջոցները, տարածում եք տեղեկություն այն մասին, թե իբր՝ ադրբեջանական տարածքի 20 տոկոսը հայկական զորքերի հսկողության տակ է, այսինքն՝ նրանց կողմից գրավված է: Փաստացիորեն դա 14 տոկոս է, իսկ առանց Խորհրդային Ղարաբաղի նույնիսկ՝ 9 տոկոս: Այս սրբագրումը պեղանտության արդյունք չէ, այլ ներկայացնում է բարեխղճության այն նվազագույն չափը, որն անհրաժեշտ է ոչ միայն հայերի հասցեին ուղղվող

ԼՐԱՏՈՒ

Գ (Գ) Գրպի, քիվ 1 (37) հունվար-մարտ, 2012

ՎԵՄ համահայկական հանդես

միակողմանի ազդեցիկա՝ տարածում գտած մեղադրանքը թեթևամտորեն կրկնելու, այլև իրադարձությունները լրջորեն ուսումնասիրելու համար: Ըստ այդմ՝ Դուք լոբբիստական հաստատությունների հետ համագործակցելուց բացի, օրինակի համար, պետք է զբաղվեիք Ղարաբաղի պատերազմի նախապատմության և ընթացքի հիմնավոր փաստերի քննությամբ՝ մինչև հասցնել և կանխակալ կերպով ազդեատրի կարգավիճակը կվերագրելիք հայերին (ըստ որում՝ Ձեր ժամանակը և համբերությունը անտեղի չշահագործելու համար հանգիստ կերպով կարող եք խուսափել հայկական և ադրբեջանական աղբյուրներից. հենց միայն անգլիական և ռուսական աղբյուրները բոլորովին այլ պատկեր կներկայացնեն, քան Ձեր կողմից ընդունվածը): Ձեր կողմից այնուհետև հիշատակված ՄԱԿ-ի բանաձևերը դատապարտել են ոչ միայն հայկական զորքերի կողմից Խորհրդային Ղարաբաղի շրջակա տարածքների գրավումը, այլև երկու կողմերին մշտապես կոչ են արել դադարեցնել ռազմական գործողությունները, ինչը նախ և առաջ՝ Ադրբեջանը, մինչև 1994 թ. մայիսը շարունակաբար անտեսել է (հարկ եղած դեպքում Դուք այդ մասին ավելի մանրամասն կարող եք իրազեկվել 1992-1996 թթ. Ղարաբաղի հակամարտությունում գլխավոր միջնորդ եղած Կազմիիրովի՝ 2009-ին հրատարակած «Խաղաղություն Ղարաբաղի համար» գրքում):

Երրորդ պարբերությունում Դուք սխալ կերպով նշում եք, թե միջազգային իրավունքի ինստիտուտները Լեռնային Ղարաբաղի առնչությամբ հանդես են եկել Ադրբեջանի տարածքային ամբողջականության պահպանման օգտին: Միաժամանակ Դուք թեթևամտորեն մոռանում կամ անտեսում եք, որ ԽՍՀՄ-ից Ադրբեջանի դուրս գալու ժամանակ դեռ գործում էր խորհրդային դատաիրավական իշխանությունը (Jurisdiktion), և այն հստակ կերպով նախատեսում էր նաև ինքնավար տարածքային միավորների դուրս գալը խորհրդային հանրապետությունների կազմից, ինչը Լեռնային Ղարաբաղը 1991-ին օրինական կերպով օգտագործեց: Ադրբեջանն իր հերթին փորձում էր օգտագործել դուրս գալու վերաբերյալ 1990 թ. ապրիլից գործող օրենքի հնարավորությունները, առանց, սակայն, պահպանելու դրա կիրառման մեխանիզմները, որոնք, ի միջի այլոց, նախատեսում էին հանրաքվե անցկացնել **բոլոր** ընդդիմացող տարածքային միավորներում: Այսպիսով, դուրս գալու օրենքը, որը, ինչպես դրանից առաջ ոչ մի այլ խորհրդային օրենք, ամրապնդում էր ազգային ինքնորոշման միջազգային իրավունքի սկզբունքը՝ առանց ԽՍՀՄ-ի տարածքային ամբողջականությունը բացառելու, Ադրբեջանը փորձում էր իր համար օգտագործել՝ չհանդուրժելով դրա կիրառումը Ղարաբաղի հայերի կողմից, ինչը ևս բխում էր նույն օրենքից:

Եթե Ադրբեջանը կարծում է, թե դուրս գալու օրենսդրական կարգը չպահպանելով, կարող էր Ղարաբաղի հայերին օրինական կերպով արգելել այդ նույն օրենքի օգտագործումը, ապա նման «փաստարկումը» ոչ միայն ցինիկ է, այլև (միջազգային) իրավունքի տեսակետից անհիմն, քանի որ 1991-ին իր դուրս գալու ժամանակ Ադրբեջանը նույնպես դեռ ենթակա էր խորհրդային դատաիրավական համակարգին: Այլապես՝ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի համար կլիներ դուրս գալու «մրցանակ»՝ դուրս գալու նույն կարգին չհետևելու համար:

Սակայն, եթե գերմանական կառավարությունը պետք է այն տեսանկյունից հանդես գա, թե իբր՝ խորհրդային ողջ օրենքը հետադարձ կերպով կարելի է կամ պետք է չգործող ճանաչել (համոզմունքային-էթիկական պորիզմ կամ ոչ իրավական արսուլյուտիզմ, ինչով գերմանական կառավարությունները երրորդ

Ուայիսի առնչությամբ երբեք չեն զբաղվել), ապա նա պարտավոր է նաև այն հարցին պատասխանել, թե ինչպե՞ս է ինքը ճանաչել նախկին խորհրդային հանրապետությունների սահմանները, սակայն նրանց կազմից դուրս գալու ցանկություն ունեցող նախկին ինքնավար տարածքային միավորների պարագայում՝ ոչ, և ճանաչել է հենց այն սահմանները, որոնք Ղարաբաղի (ինչպես առհասարակ՝ Հայաստանի) դեպքում այն ժամանակվա Ազգությունների կոմիսար Ստալինի կողմից Հայաստանի բզկտման ստրատեգիական կշռադատումների արդյունքն էին և իրագործվեցին 1918-1921 թթ. երիտթուրքական և քեմալական ներխուժումների միջոցով: Գերմանիան և գրեթե բոլոր մյուս պետությունները այս առնչությամբ, այսպիսով, նախընտրում են և փորձում են կարգավորել խորհրդային և թուրքական ժառանգության ամենախնդրահարույց, այո, ամենաճակատագրական նշանակություն ունեցող բաղկացուցիչը:

Մենք շատ լավ հասկանում ենք, որ Գերմանիան՝ որպես ճանաչված պետություն, որն ունի դրան համապատասխանող առկա սահմաններ, միջազգային իրավունքի տարածքային ամբողջականության (մեծ մասամբ՝ պատմական անցյալից անկախ ընկալվող) սկզբունքը գերադասում է ազգերի ինքնորոշման իրավունքից: Չնայած դրան, այստեղ, սակայն, արժե մի կարճ հայացք նետել Ադրբեջանի տարածքային ամբողջականության առաջացման պատմության վրա, որը սովորաբար ընկալվում է ճանաչված պետությունների սովորական պրակտիկային համապատասխան:

Ադրբեջանցի-ազերի էթնիկական անվանումը, ինչպես նաև **Ադրբեջան** պետությունը աշխարհի պատմության մեջ առաջին անգամ ի հայտ են եկել 1918-ին: Դրա երևան գալը հիմնականում պայմանավորված էր թուրքական նախաձեռնությամբ, որն, ի միջի այլոց, հանգեցրեց այն բանին, որ Առաջին համաշխարհային պատերազմի վերջին տարում թուրքական զորքերը ներխուժեցին Հարավային Կովկաս: Այնտեղ նրանք հետապնդում էին երկու նպատակ. մի կողմից՝ 1915-1916 թթ. ցեղասպանության շարունակումը (որը հիմնականում վերաբերել էր Արևմտյան Հայաստանին) և մյուս կողմից՝ Ադրբեջան անունով մի եղբայր-պետության հիմնումը Հարավային Կովկասի արևելքում: Ընդ որում՝ «Ադրբեջան» անունը առաջին հերթին ծառայում էր այն բանին, որ արդեն այն ժամանակ տարածքային պահանջներ ձևակերպվեին Իրանի հանդեպ, որի հյուսիսային շրջաններում ապրում էին և ապրում են շատ թրքախոս իրանցիներ:

Այն բանից հետո, երբ թուրքական բանակը մինչև Կասպից ծով արյան մի լայն հետագիծ էր գծել և եզրափակիչ կոտորածով տապալել էր Բաքվի Կոմունան (առաջին խորհրդային կառավարությունը Հարավային Կովկասում), հիմնադրվեց Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը, որը գոյատևեց 1918-1920 թթ.: Այն իր գոյության ընթացքում Ազգերի Լիգայի կողմից երբևէ չճանաչվեց, քանի որ արդյունավետ վերահսկողություն չէր կարողանում իրականացնել իր կողմից պահանջվող տարածքների, մասնավորապես՝ Լեռնային Ղարաբաղի վրա:

Ազգերի Լիգան Նախիջևանը և Լեռնային Ղարաբաղը համարում էր վիճելի տարածքներ: Այս իրողությունն իր ավարտին հասավ միայն Հարավային Կովկասի վերջնական խորհրդայնացման հետևանքով (1920-1921 թթ.), ընդ որում՝ Մոսկվան ինքը ստանձնեց Իրանի դեմ թուրքական էքսպանսիայի ռազմավարությունը և ստեղծեց մի երկրորդ Ադրբեջան:

Թուրքիայի ուժգին ճնշման ներքո, որը Մոսկվան ուղղում էր Հայաստանի վրա, Հայաստանի Խորհրդային Հանրապետությունը 1921-ին ստորագրեց Կարսի պայմանագիրը, որն, ի միջի այլոց, նախատեսում էր հատուկ խնամակալության տակ դնել կիսով չափ հայերով բնակեցված Նախիջևանը, սակայն չներառել Ադրբեջանական ԽՍՀ-ի տարածքի մեջ (հետագա տասնամյակներում այն հայերից լիովին դատարկվեց): Այդ պայմանագիրը, Անկարայի և Մոսկվայի կարծիքով, դեռ այսօր էլ պարտադիր է Հարավային Կովկասի սահմանների գծման հարցում:

Հայաստանի Խորհրդայնացման առաջին ամիսներին Մոսկվան և Բաքուն բազմիցս հայտնել են իրենց համաձայնությունը Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միացնելու առնչությամբ և դրանով հաստատել Ղարաբաղի հայերի ինքնորոշման իրավունքը: Եվ միայն մի քանի ամիս անց Ռուսաստանի Կոմկուսի Կովկասյան բյուրոն, չնայած միջազգային իրավունքի տեսակետից այն հազիվ թե դրա իրավասությունն ուներ, միմյանց հակասող երկու նիստերում և Ստալինի անձնական ճնշման ու հրահանգի ներքո Լեռնային Ղարաբաղը մեխեց Ադրբեջանին (1921 թ. հուլիսի 4-5):

Այսպիսով, ներկայիս Ադրբեջանի Հանրապետությունը, որն իր վերականգնված ինքնուրույն պետականությունը վերագրում է 1918-1920 թթ. Ադրբեջանական Գեմոկրատական Հանրապետությանը (ԱԳՀ), ո՛չ իրավական և ո՛չ էլ պատմական առումով (քաղաքական, ժողովրդագրական և այլն) չի կարող համոզականության պահանջի առնչությամբ, որը կներառի Լեռնային Ղարաբաղը:

Բաքուն ինքը դա 20 տարի ի վեր հիմնավորում է Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդը լինելուց իր հրաժարումով և միջազգային ու պետաիրավական առումով վկայակոչում է ԱԳՀ-ին, որին, անկասկած, Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանը երբեք չեն պատկանել: Դրան հակառակ, Բաքուն գերծ է մնում Խորհրդային Ադրբեջանի վկայակոչումից, քանի որ նա այդ դեպքում պետք է ճանաչի նաև նրա կազմից դուրս գալու վերաբերյալ Խորհրդային օրենքի իրավական պարտադիր ուժ ունենալը և ըստ այդմ՝ պետք է ճանաչի Լեռնային Ղարաբաղի՝ Ադրբեջանի կազմից դուրս գալը:

Մենք կարծում ենք, որ այս փաստերն ու պարզաբանումներն այստեղ պետք է բավական լինեն՝ միանգամայն անհիմն համարելու համար Ադրբեջանի տարածքային ամբողջականության պահպանման և միջազգային-իրավական առումով Լեռնային Ղարաբաղի նկատմամբ նրա պահանջի հիմնավորումը, որի հանդեպ Դուք Ձեր դիրքորոշում արտահայտող թղթում ըմբռնում եք ցուցաբերում:

Տարածքային ամբողջականության սկզբունքի կարծեցյալ առաջնայնությունը, ընդհանրապես, չի թվում, թե լավագույնն է: Կամ ինչպե՞ս է, որ Դուք և ուրիշները՝ ինչ-որ կերպ շահագրգիռ վճիռ կայացնողներդ, Ձեզ հասկանալի չեք դարձնում Ղարաբաղի հայերին: Ինչու՞ Կոսովոյի ալբանացիների ինքնորոշման իրավունքը ճանաչվեց և Կոսովոյի անջատմանը հավանություն տրվեց, իսկ Լեռնային Ղարաբաղի պարագայում՝ ոչ: Անկասկած, ոչ այն պատճառով, որ Դուք դա անհրաժեշտ չէիք համարում կամ Կոսովոյի ալբանացիների ինքնորոշման իրավունքը ավելի հիմնավորված էիք համարում, այլ ավելի շուտ՝ Դուք (առնվազն Ձեր մինչայժմյան փաստարկումների շրջանակում) դա ամենևին էլ չեք

կարող անել: Կոտվոն բացառիկ դեպք համարելը և դրա հետևում բոլոր քննարկումներին վերջակետը դնելը մինչև անգամ Եվրոպային (Եվրոպայում) չի կարող համոզել, ուր մնաց Կովկասում:

Ղարաբաղի հայերի ինքնորոշման՝ միջազգային իրավունքին համապատասխանող պահանջի հիմնավորվածությունն ընկալելու համար մենք Ձեզ կառաջարկենք կարդալ պրոֆ. Օտտո Լուխտերհանդտի երկու տեքստերը (1993 թ. և 2010 թ.), ինչպես նաև Ղարաբաղի հակամարտության առաջացման պատմության վերաբերյալ Հաիզ Ազենբաուերի ատենախոսությունը (1993 թ.), որն ի մի է բերում նրան վերաբերող հիմնական իրավա-քաղաքական փաստաթղթերը, դրանք մանրամասնորեն մեկնաբանում է՝ իրենց պատմական համատեքստում դասակարգելու նպատակով և համոզիչ ու հանգամանալից կերպով վերլուծում է: Մենք Ղարաբաղի հակամարտության պատմական և իրավական ասպեկտների խորքային դիտարկման բացակայությունը համարում ենք միջնորդական գործընթացի ծանրակշիռ թերություն, ինչը Ձեր դիրքորոշումն արտահայտող փաստաթղթով միայն ավելի է մեծանում:

Երրորդ պարբերությունում Ձեր կողմից ցանկալի համարվող «խաղաղ ճանապարհը» ամեն դեպքում, այնպիսի ճանապարհ չէ, որտեղ հանդիպելու ենք ադրբեջանցիների, որոնք հավանություն կտան իրենց ներկայիս կառավարության քաղաքականությանը: Եվ, ըստ այդմ, Ձեր ձևակերպումը իր վերացականության և պարզունակության մեջ նաև շրջանցում է Ղարաբաղի հակամարտությունում առկա ներկայիս իրադրությունը:

Բնութագրական է նաև Ձեր կողմից ընտրված նախադասությունների հաջորդականությունը: Դուք խոսում եք այնպիսի խաղաղ ճանապարհի մասին, ինչը ենթակա է վիճարկման, և դրան հաջորդող նախադասության մեջ բացասում եք Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ ազատ ընտրություններ անցկացնելու ունակությունը, որոնք Դուք, առանց այդ էլ, ամենևին **չեք ուզում** ճանաչել: Միաժամանակ, Դուք առհասարակ չեք ընդունում այն ճանապարհը, որը Լեռնային Ղարաբաղում մարդիկ անցել են, կամ որը նրանք ստիպված էին անցնել:

Դրա փոխարեն օգտվում եք զինադադարի գծի երկայնքում դիպուկահարների գոհերի՝ մի լիովին միտումնավոր հաշվարկից. ո՛չ նկատի է առնվում այն հանգամանքը, որ հենց Ձեր նշած գոհերը ոչ մի անկախ կողմից չեն հաստատվել (ընդհակառակը), և ո՛չ էլ այդ համատեքստում առաջ են քաշվում կամ առավել ևս պատասխան են ստանում հետևյալ տարրական հարցերը. ո՞վ է պաշտոնական զինադադարից (1994 թ. մայիս) ի վեր միակողմանիորեն մերժում զինադադարի ռեժիմի պայմանագրային ամրապնդումը: Ո՞ր կողմն է համառորեն մերժում դիպուկահարներին ետ քաշելու պահանջը: Ո՞վ է այստեղ գլխավորապես շահագրգռված ռազմական սադրանքներով և սպառնալիքներով՝ բռնկման վտանգը մշտապես արթուն պահելու հարցում, և ո՞վ է նաև փաստացի կերպով հետևում այդ շահին: Ինչպե՞ս է, իրոք, լինում, որ պատերազմի պաշտոնական ավարտից ի վեր տարեկան ավելի քան 30 մարդիկ սպանվում են զինադադարի գծի մոտ, և այն էլ՝ երկու կողմերից (որոշ՝ միանգամայն լուրջ գնահատումների համաձայն՝ 1994 թ. մայիսից հետո 3000 գոհեր են եղել): Եթե երեխաները փաստացիորեն հայ դիպուկահարներից կողմից են սպանվել, ապա ի՞նչ գործ ունենին նրանք զինադադարի գծի մոտ, որը 1994-ից ի վեր ո՛չ բուֆերային գոտի

ԼՐԱՏՈՒ

Գ-(Գ) քաղի, քիվ 1 (37) հունվար-մարտ, 2012

վեմ համահայկական հանդես

ունի, ո՛չ կապույտ սաղավարտների կողմից է վերահսկվում և ո՛չ էլ գործող զինադադարի ռեժիմի մեջ է:

Այնհայտ է, որ Ձեր փաստաթղթի այս նկատառումները նույնպես ձևակերպվել են առանց հիմնավոր տեղեկությունների, այո՛, նույնիսկ ցանկություն չի եղել գեթ նվազագույն չափով վերլուծական մոտեցում հանդես բերել: Դրա համար պետք չէ տարիներ շարունակ հետազոտել, բայց բոլոր դեպքերում, հարկ է համբերատար, ողջամիտ, անկողմնակալ քննություն կատարել՝ այնուհետև ինքնուրույն հետևություններ անելու համար, փոխանակ տեղի տալու այն շահերին, որոնք ինչ-որ մեկին հավանաբար թելադրվում են Եվրոպայի, Գերմանիայի կամ կուսակցական վարչության միջոցով:

Հինգերորդ և վեցերորդ հատվածներում արտահայտված Ձեր նկատառումներն ունեն դեմագոգիկ բնույթ: Հինգերորդ պարբերությունում Դուք նախագուշացնում եք լեռնային շրջաններում ճանապարհորդություններ կատարելուց և հայտնում, որ հարկ եղած դեպքում ոչ մի արտասահմանյան ներկայացուցչություն չի կարող օգնել: Միաժամանակ, արտգործնախարարությունը խնդիր չի տեսնում այլ շրջաններ այցելելու պարագայում, որտեղ շատ ավելի հեշտությամբ կարելի է վնասվել. այսինքն՝ ստացվում է, որ կարելի է միամիտ կերպով այցելել այսպես կոչված՝ զինադադարի գծի մերձակայքը և գնդակահարվել մի ադրբեջանցի դիպուկահարի կողմից, որը ցանկացած այցելուի մահացու թշնամի է համարում, քանի որ, ըստ Բաքվի տեսակետի՝ Ղարաբաղ այցելություն կատարելը նշանակում է ճանաչել նրա անկախությունը և այդպիսով ինքնաբերաբար ստանալ թշնամու կարգավիճակ:

Հինգերորդ հատվածի՝ «աճող հակամարտությանը» վերաբերող առաջին նախադասության համատեքստում Դուք լռում եք նաև այն մասին, որ այս հակամարտությունը կարող էր վաղուց լուծված լինել, եթե Դուք և միջազգային դիվանագիտական բեմի վրա գտնվող մյուս դերակատարները հետևողականորեն ճանաչեիք Ղարաբաղի հայերի ինքնորոշման իրավունքը:

Այնուհետև, չնայած խոսում եք Բաքվի կառավարության կողմից սպառազինությունների ավելացման ձգտումների մասին, սակայն դա չեք կապում հայկական կողմի՝ ըստ Բաքվից մինչև օրս լսվող տեսակետի, «սարսափազդու» գործնական պաշտպանական ունակությունների հետ: Դրա փոխարեն Դուք սրան հակադրում եք 2010 թ. հայ-ռուսական փոխօգնության համաձայնագիրը: Եթե դրան անդրադառնում եք, ապա պետք է անդրադառնալիք նաև ադրբեջանաթուրքական համագործակցությանը՝ առհասարակ ուժերի հարաբերակցությունը այդ հարթության վրա որոշակիացնելու համար:

Սպառազինման մրցավազքը միմիայն Բաքվի կողմից է գործի դրվել և նրա կողմից շարունակում է ուժգնացվել: Ռուսական ռազմական բազաները հիմնականում այն պատճառով են այնտեղ գտնվում, որ Թուրքիան 1993-ին Հայաստանին սպառնում էր պատերազմի մեջ մտնել, և այս վտանգը դրանից հետո երբևէ լիովին չի մարել: Դուք միաժամանակ ցանկանում եք, որ նման Թուրքիան ավելի ծանրակշիռ դերակատարում ունենա հակամարտության կարգավորման միջնորդության մեջ և այդպիսով, ըստ էության՝ հենց հակամարտության մեջ: Այլ խոսքով՝ Դուք անուղղակիորեն քվեարկում եք հակամարտության սրման օգտին և այն էլ՝ ակնհայտորեն ի վնաս Հայաստանի ու Ղարաբաղի:

Սպառազինությունների մրցավազքը խաղաղության կնքմամբ ավարտելը

միայն Ռուսաստանից կախված չէ. եթե Մոսկվան այսօր-վաղը դադարեցնի երկու երկրներին զենքի բոլոր մատակարարումները, ապա զինման հնարավորությունները և պայքարի ներուժի ինքնագնահատումները շատ շուտով միմյանցից այնքան կհեռանան, որ Բաքուն մի նոր պատերազմի որոշում կկայացնի. ի վերջո՝ նրա զենքի աղբյուրները վաղուց ավելի բազմազան են, քան Հայաստանինը, և այս առումով նաև՝ Արևմուտքը, ներառյալ Գերմանիան, պետք է ինքնաքննադատական հարցեր ուղղեն իրենց:

Ձեր փաստաթղթի **յոթերորդ** պարբերությունում նման աղավաղումներն ավելի պարզորոշ են դառնում, երբ անդրադառնում եք Բեռլինի և Բաքվի շահերի բուն համատեղմանը, ինչը, ազնիվ լինելու դեպքում, պետք է պարզորոշ կերպով ի հայտ գար ավելի առաջ: Մակայն սկզբում քաղաքական առումով խոսքը կոռեկտ շողորբությունից այն կողմ չի անցնում: Եթե հարցը դիտարկենք իր դաժան հիմքի վրա, ապա Ձեր պատճառաբանությունները Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը համարում են խոչընդոտ Գերմանիային գազի մատակարարումների համար: Ձեր կարծիքով, սակայն, դրանում մեղավորը Ադրբեյջանը կամ թեկուզ՝ երկու հակամարտ կողմերով պայմանավորված իրադրությունը չէ. շատ կամ քիչ չափով միակ պատասխանատուն Դուք համարում եք Հայաստանը:

Տասներկու տարի առաջ մի նմանապես մեծ քննարկում ունեինք: SPD-ն (Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը-թարգմ.) ներկայացրել էր դիրքորոշում արտահայտող մի փաստաթուղթ՝ Կասպից ծովում շահերի ոլորտի վերաբերյալ: Նրանց կուսակցության այն ժամանակվա պաշտպանության նախարարը (Ռյուտեն) ասաց, որ եթե Ռուսաստանի, Հայաստանի և Իրանի միջև հյուսիս-հարավային սահմանագիծ լիներ, ապա ի հայտ կգար «պաշտպանության անհրաժեշտություն»: Ըստ այդմ՝ մենք կուզենայինք Ձեզ հարցնել, թե մեկը, որը արդեն տասնամյակներ ի վեր պատերազմական հռետորաբանությամբ է զբաղվում, արդյո՞ք կարող է խորհել խաղաղ ճանապարհների մասին:

Ռազմավարական գործընկերությունը, որ Հայաստանը հաստատել է Ռուսաստանի հետ, ծառայում է ոչ միայն Հայաստանի Հանրապետության, որպես իրավական միավորի, այլև հայ ժողովրդի և նրա մշակույթի անվտանգությանը: 1989-ից Հայաստանը մեկուսացվել է բոլոր կարևոր տրանսպորտային և մատակարարման ճանապարհներից, քանի որ ինչպես Թուրքիան, այնպես էլ Ադրբեյջանը համընդհանուր շրջափակում են իրականացնում նրա հանդեպ: Նման բոյկոտի՝ միջազգային իրավունքին հակասելու մասին մենք Ձեր գրչով գրված ոչինչ դեռ չենք կարդացել:

Չի զարմացնում նաև այն, որ ստատուս քվոն ապահովության ավելի մեծ երաշխիքներ ունի, քան Ձեր կողմից առաջարկվողները, որոնք այն տպավորությունն են ստեղծում, թե բացառապես սահմանափակվում են ադրբեյջանական բնակչությամբ, որն ավելի մեծ քանակությամբ և ավելի հարաճուն կերպով է զինադադարի կամ ճակատային գծի մոտ բնակվում, քան հայերը, և միաժամանակ ակներևաբար չի խորշում կրակի տարածության վրա երեխաներ պահել կամ ցինիկ հաշվարկով՝ զոհերից շահաբաժիններ կորզելու նպատակով նրանց դիրքեր տանել:

Մեր աչքին զարնեց նաև Թուրքիայի նախագահ Գյուլի 2011 թ. դեկտեմբերի 23-ին կատարած հայտարարությունը: Նա Փարիզին մեղադրում էր Սինսկյան գործընթացում իր չեզոքությունը խախտելու մեջ, ինչը պայմանավորված էր

ցեղասպանության ժխտման օրենքով: (<http://www.trtdari.com/trtworld/en/newsDetail.aspx?HaberKodu=5724d999-1600-44ce-b377-b6afdc6b984e>)

Դուք փաստորեն թրքամետ-կողմնակալ մտտեցմամբ առաջարկում եք Ֆրանսիան փոխարինել ամբողջ Եվրոպական Միության մի ներկայացուցչով: Թուրքիան, այսպիսով, Չեզ հետ միասին փորձ է կատարում Ֆրանսիային դուրս մղել Դարաբաղի հակամարտության կարգավորման միջնորդական գործընթացից, ընդ որում՝ Դուք չնայած ուղղակիորեն չեք նշում հակաժխտողական օրենքի մասին, այնուհանդերձ հետևողականորեն այն թելն եք փաթաթում, որը Չեզ նետել է Գյուլը: Հետաքրքիր է նաև, որ Դուք հետևում եք Գյուլին, չնայելով, որ նրա խոսքերը անթույլատրելի ոտնձգություն են եվրոպական պետության քաղաքական սուվերենության հանդեպ: Այդ օրենքի առնչությամբ ժողովրդավարական կերպով իրականացված կամքի դրսևորումը Գյուլին հիմք է դառնում պնդելու, թե Ֆրանսիան բավականաչափ չեզոք չէ՝ Մինսկի խմբի անդամ մնալու համար: Արդյո՞ք Գյուլն աղետալի կերպով չի շփոթում միմյանց հետ երկու հարթություններ. ցեղասպանությունների համընդհանուր դատապարտումը (որը մաս ուրիշներին, սակայն ամենից ավելի՝ թուրքական պետությանն է երկյուղ պատճառում) և Լեռնային Դարաբաղի հարցի կարգավորումը, որի պարագայում Անկարան և Բաքուն Ֆրանսիայի՝ **այլընտրանքներ բացառող**, մարդու իրավունքներին համահունչ դիրքորոշումը դարձնում են շարժառիթ՝ նրան որպես միջնորդ ոչ ունակ հռչակելու և Մինսկի խմբից դուրս մղելու, Թուրքիային հակամարտության կարգավորման հարցում վճռական դերակատարում ապահովելու և ըստ այդմ՝ դրան հաջորդող միջնորդական գործընթացում հայերի կապիտուլյացիային կամ նոր պատերազմի հասնելու համար:

Դուք երախտագիտորեն չե՞ք յուրացրել Գյուլի նախադասությունից անանցվող բռնության գաղափարը՝ Կասպից ծովում գերմանական շահերը եվրոպական դիմակի ետևում ավելի լավ իրագործելու համար: Եվ կարո՞ղ է Ֆրանսիան այժմ, քանի որ ցեղասպանությունների ժխտումը քրեականացնող օրենքը առայժմ կասեցվել է, դարձյալ **ավելի չեզոք** հանդես գալ Լեռնային Դարաբաղի հակամարտությունում: Արդյո՞ք նա «արդարացվել» է Չեր և թուրքերի աչքում: Ով ցեղասպանության ժխտման ընդհանուր քրեականացումը անհամատեղելի է համարում (այլ) հակամարտություններում, օրինակ՝ Լեռնային Դարաբաղի հակամարտությունում միջնորդական առաքելության հետ, պետք է կարողանա ավելի ստույգ ներկայացնել և հիմնավորել, թե որտե՞ղ է բարբարոսությունից սահմանազատվում իր քաղաքականությունը: Կարելի է կասկածել, թե Անկարան և Բաքուն կարող են դա հիմնավորել, և CDU-ուն, ըստ այդ դիրքորոշման թղթի, նմանապես չի կարող:

Վաղ թե ուշ Դուք նույնպես ստիպված կլինեք վճիռ կայացնել այն ընդհանրական հիմնահարցի առնչությամբ, թե արդյո՞ք ցեղասպանության ժխտման արգելքը համատեղելի է հակամարտություններում միջնորդության ունակության, հետազոտությունների և խոսքի ազատության, կարճ ասած՝ այն ամենի հետ, ինչը մենք հասկանում ենք ժողովրդավարության ներքո (ուզում ենք հասկանալ): Եթե համատեղելի չեն, ապա Դուք հրաժարվեք Գերմանիայում հետպատերազմյան կարգավորումների հիմունքներից մեկից, քանի որ Շոահի ժխտումը նույնպես անխուսափելիորեն վերաբերում է խոսքի ոլորտին: Եթե չեք հրաժարվում, ապա Դուք առնվազն հրաժարվեք Բաքվի և Անկարայի պահանջները սեփականելուց և

հակաժխտողականության օրենքի պատճառով Ֆրանսիային Ղարաբաղի հակամարտության կարգավորման միջնորդությունից հեռացնելուց, այն դեպքում, եթե դեռևս պատրաստ չէք Թուրքիայի վրա Հայոց ցեղասպանության ճանաչման նպատակով ճնշում գործադրելու, ինչպես և անձամբ դա ճշգրիտ կերպով ճանաչելու:

Եգրափակիչ մասում Դուք Ձեր դաշնային կառավարությանը հասցեագրում եք պահանջների մի ցուցակ, ընդ որում՝ ուշադրության առանցքում էներգետիկայի ոլորտում Ձեր շահերի իրագործումն է, որը Դուք, չնայած առադրում եք Ձեր կողմից քարոզվող հակամարտության խաղաղ լուծմանը, սակայն վերջինս իրականում ստորադասվում է այդ շահերին: Հստակ տեքստով դա նշանակում է հետևյալը. այն, ինչ Դուք համարում եք Ղարաբաղի հակամարտության լուծում, սուկ մի հաշվարկ է՝ արված Կասպից ծովում էներգետիկ ռեսուրսների օգտագործման տեսանկյունից:

Հակամարտության կարգավորման հարցում դրական ներդրումներ ի հայտ կգան միայն այն դեպքում, եթե առաջ քաշվի այն նախապայմանը, որ Լեռնային Ղարաբաղում/Արցախում քրիստոնյա հայերն այլևս ենթակա չպետք է լինեն Բաքվի մոսուլմանական և պանթուրքական իշխանավորների տնօրինությանը:

Ձեր հատուկ լիազորը, որ ունի «հստակ մանդատ», հավանաբար առավել կջանա հակամարտության համար Ձեր էներգետիկ շահերին համապատասխան լուծում գտնել, քան նպաստել Ադրբեջան պետությունում մարդու իրավունքների պահպանմանը: Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչները պետք է կարողանան Մինսկյան գործընթացում հանդես գալ որպես ինքնուրույն բանակցողներ, որպես հավասարաբեռեք հակամարտ կողմ (մինչև այժմ խոսվել է միայն տուժած հայերի գլուխների վրայով): Ի վերջո պետք է հասնել այն իրավիճակին, որ նրանց հետ խոսեն:

Ձեր կողմից ներկայացվող վիճահարույց հույսերով ուղեկցվող (ռուսական գործառնների հեռացում Հայաստանից) թուրք-հայկական հարաբերությունների նորմալացման ամբողջ պարադոքսն այն է, թե ի՞նչ պայմաններով թուրք-հայկական մերձեցում կարող է տեղի ունենալ: Հենց այդ հարցը Դուք, ինչպես և այսպես կոչված՝ նորմալացմամբ շահագրգիռ շատ ուրիշները գիտակցաբար բաց եք թողնում: Այս առնչությամբ պետք է ենթադրել, որ մերձեցում պետք է տեղի ունենա ռեալ քաղաքական ուժերի հարաբերակցության շրջանակներում, ինչի դեպքում Հայաստանը ոչինչ չի կարող ակնկալել: Բաքուն և Անկարան, դրան հակառակ, կարող են այդ պարագայում ժխտողականության վերացման մի կիսասիրտ խոսքի դիմաց ավելի մեծ վարձատրություն ակնկալել, քան Լեռնային Ղարաբաղն է, ինչից և նրանք տրամաբանորեն այն հետևությունն են անում, որ արժե շարունակել ժխտումը, ոչ վերջին հաշվով՝ այն պատճառով, որ այդպիսով Լեռնային Ղարաբաղն իրենց տեսադաշտից կորած չի լինի:

Մութ է մնում **չորրորդ պարբերությունը**, որում ուզում եք Ռուսաստանին «դուրս մղել»: Դուք գործնականում ռուսական կողմին մեղադրում եք ստատուս քվոն պահպանելու մեջ և դրա վերացումը կապում եք տարածաշրջանում սպառազինության մրցավազքի վերացման հետ: Սակայն ո՞ր ստատուս քվոն նկատի ունեք: Դուք նկատի ունեք թուրք-հայկական սահմանի վրա գտնվող ռուսական զորքե՞րը, որոնք այնտեղ են նաև Հայաստանի Հանրապետությունը պաշտպանելու համար, ինչի մասին վեցերորդ կետում խոսում եք, երբ ռուսական

գորքերի հեռացումը համարում եք նպատակ: Բացի այդ՝ Ռուսաստանը ինչպես նախկինում, այնպես էլ ներկայումս միակ ազդեցիկ երկիրը չէ, որ պաշտպանում է այս ստատուս քվոն:

Ադրբեջանի ստատուս քվոն, որն առաջին հերթին է պատասխանատու Արցախի անկախ հանրապետության հարկադրված ծննդյան հարցում, լիովին դուրս է մնում Ձեր տեսադաշտից: Հակամարտության խաղաղ կարգավորում այնքան ժամանակ չի լինի, քանի դեռ Լեռնային Ղարաբաղում քրիստոնյա հայերին պետական ինքնուրույնություն չի տրվել: Ձեր կողմից նկատի առնվող՝ հակամարտության խաղաղ կարգավորման դրական էֆեկտը, որն, իհարկե, անմիջականորեն կապված է Եվրոպայի կողմից կասպիական տարածաշրջանում գազի և նավթի պաշարները յուրացնելու հետ, բացառում է հայերին՝ որպես ինքնուրույն խմբի. եթե գազը պետք է հոսի, ապա, երբ փորձենք ընթանալ Ձեր երազանքների իրականացման ուղիով, դրա նախապայմանը կլինի հազարավոր մարդկանց մահը:

Եզրափակիչ 6-րդ և 7-րդ կետերը կարելի է, ըստ այդմ, ոչ այլ կերպ, քան սուկ շողոքորթություն և հաշտեցման ամենաէթանագին հռետորիկա ընկալել: Թուրքիան չի կարող կառուցողական դեր ունենալ խաղաղության գործընթացում, քանի որ նա, առնվազն մինչև այժմ, հայերի հետ երբեք լավ հարաբերություններ չի ունեցել: Որպես դրա ապացույց՝ պետք է վկայակոչել ոչ միայն Հայոց ցեղասպանության ճանաչումից նրա մոլի հրաժարումը, որի համատեքստում, ի դեպ, կարելի է դիտարկել Գլուլի ազդեցությունը. նաև՝ երկրում քրիստոնյա փոքրամասնության հանդեպ գործադրվող սկզբունքային խտրականությունն է Ձեր ռազմավարական գործընկեր Թուրքիայի սովորական քաղաքականության մասը: Ադրբեջանը կրկին Թուրքիային համարում է իր ամենասերտ դաշնակիցը և շատ տեսանկյուններից ընդօրինակում է նրան, ինչը, ադրբեջանական Առաջին հանրապետության առաջացման պատմությունը նկատի առնելիս, չի զարմացնում: Այլախոհների հետապնդման քաղաքական պրակտիկան ներկայումս նույնպես վարակիչ է: Ամենաթարմ օրինակը Բաքվում Եվրատեսիլի ներկայացման նախապատրաստություններն են, որոնք անհատույց սեփականազրկումների հիմք են դառնում և ցանկալի առիթ են այլախոհների գոյատևման հիմքերը վերացնելու համար (http://www.hrea.org/index.php?base_id=2&language_id=8&headline_id=14936). Դրանով ներկայիս Ադրբեջանում փակվում է նաև հայկական հարցի շրջանակը, եթե հիշենք, որ միայն Բաքվից 1988-1990 թթ. շուրջ 250.000 հայեր, հաճախ ծայրահեղ բիրտ կերպով, մահվան սպառնալիքի ներքո իրենց բնակարաններից վտարվեցին՝ առանց նույնիսկ մասնակի փոխհատուցում ստանալու:

Ադրբեջանը, մասնավորապես, Լեռնային Ղարաբաղի դեպքում չի հետապնդում հայ բնակչությանը խաղաղ գոյատևման հնարավորություն ընձեռելու քաղաքական նպատակ: Ղարաբաղի հայերին լավագույն դեպքում սպասվում է Բաքվի հայերի ճակատագիրը, եթե Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, ինչպես Դուք այն հասկանում եք, վերականգնվի: Հիրավի, բավականաչափ արյուն է հոսել, և այն էլ դեռ վերջին պատերազմից (1991-1994 թթ.) առաջ, որպեսզի կրկին Ադրբեջանի կազմում հայերին ինքնավարություն տալու փորձ արվի:

Հակամարտության կարգավորման հարցում Թուրքիային աջակցության

ցուցաբերումը, այսպիսով, մի կողմից՝ կարելի է արժևորել որպես աջակցություն Հայոց ցեղասպանության կազմակերպված մոռացությանն ու ժխտմանը, մյուս կողմից՝ որպես բազմակի համագործակցություն այն բանի շարունակման և ավարտման հարցում, ինչը թուրքական զորքերին 1918-ին Լեռնային Ղարաբաղում լիակատար կերպով չհաջողվեց, այն է՝ հայերի վերջնական բնաջնջումն ու վտարումը:

Թուրքիան որքան ավելի քիչ (ոեալ քաղաքական առումով) պատասխանատվություն ստանձնի հայ-ադրբեջանական հարաբերություններում, այնքան Հարավային Կովկասում նրա դերը ավելի կառուցողական կդառնա: Այսինքն՝ նա իր պատմական և ազգայնական (լոբբիստական և այլն) իրական քաղաքականության քիկումը գտնվող պատասխանատվությանը բավարարում կտա, եթե հանդես չգա ո՛չ որպես տարածաշրջանային ուժ և ո՛չ էլ որպես Ադրբեջանի խնամակալ, մասնավորապես՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում: Այլ խոսքով՝ Թուրքիան որքան ավելի ձեռնպահ մնա, այնքան ավելի շատ կօգնի: Ցանկացած այլ քաղաքականություն կհանգեցնի հակամարտության անպատասխանատու բորբոքման:

Ձեր դիրքորոշման թրթում ներկայացված առաջարկներն ու պահանջները մեծացնում են Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում պատերազմի հավանականությունը, որն առանց այն էլ բավական մեծ է: Ո՛չ որ Ձեզինց չի պահանջում, որ Դուք Հարավային Կովկասում անկեղծ և հետևողական կերպով հետապնդեք էներգատնտեսական շահերից զերծ այլ շահեր: Այնուհանդերձ, Ձեր իսկ դիրքորոշումները անկասկած կմեծացնեն Ձեր պլանների ձախողման ներուժը, եթե մի նոր պատերազմով Ադրբեջանի էներգահամակարգը փլուզվի, կամ հայերի բնաջնջման քաղաքականությունը մի նոր փուլ մտնի, և այն էլ, ինչպես բազմիցս եղել է, Գերմանիայի օգնությամբ: Մենք ակնկալում ենք, որ Դուք այդ երկու տարբերակների հետ էլ համաձայն չեք լինի:

Այդ պատճառով մենք խնդրում ենք սրբագրել Ձեր դիրքորոշման թուղթը և միտումնավոր ադրբեջանամետ ուղղությունը հակակշռել հակամարտության կարգավորման այնպիսի սցենարների ներկայացումով, որոնք Ղարաբաղի հայերին փաստացի գոյատևման և ինքնորոշման հնարավորություն կընձեռեն, ինչը Ադրբեջանի կազմում ինքնավարությամբ հնարավոր չէր և հնարավոր չի լինի:

Վերջում կուզենայինք ևս մեկ անգամ Ձեր ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ, հիշելով սեփական պատմությունը, նկատի առնեք, որ որևէ գերմանական կառավարության չի պատշաճում ո՛չ Թուրքիային դեպի Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման բանակցությունների սեղանները տանող սողանցք բացելը և ո՛չ էլ Ֆրանսիային այնտեղից հեռացնելը (լինի դա Անկարայի և Բաքվի կոչով, թե Ձեր սեփական մղումով):

Բարեկամական ողջույններով՝
Յուրգեն Գիսպերտ, Զրիստիան Կոլտեր

ԼՐԱՏՈՒ

Պ (Գ) Գրպրի, քիվ 1 (37) հունվար-մարտ, 2012

ՎԵՄ համահայկական հանդես

ԺԻՐԱՅԻՐ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԲԱՑ ՆԱՄԱԿԸ ԵՎ ԿԻՑ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«20-ամյա հակամարտություն Լեռնային Ղարաբաղի շուրջ. նոր ազդակ հակամարտության խաղաղ կարգավորման համար»
փաստաթղթի վերաբերյալ

CDU/CSU-ի գրառքի դիրքորոշումը

Գերմանական մամուլը շատ ակտիվ գտնուեց Ֆրանսիայի՝ Ցեղասպանության հերքումը քրեականացնող օրինագծի առնչությամբ: Տարբեր բնագաւառների ներկայացուցիչներ կաշից դուրս գալով «Փաստում» էին, թէ այդ օրինագիծը մտքի և խօսքի ազատութեան դէմ է: Համակիրների քանակը, նուազ լինելով, ուշադրութեան չարժանացաւ:

Հազիւ էինք փրկուել «մարդու ազատութեան ռաւիւրաների» մամուլ տեղատարափից, երբ վրայ հասաւ CDU/CSU-ի Բունդեսթագի խմբակցութեան գրառքի դիրքորոշումը: Մենք էլ սկզբում Պարոն Իգոր Մուրադեանի նման ենթադրեցինք, թէ ադրբեյջանա-թրքական հերթական կեղծիք է: Խնդիրը նրանում էր, որ ադրբեյջանական քարոզչական մեքենան, «որոշումից» տեղեակ լինելով (խեղաթյուրելով խմբակցութեան «որոշումը»)՝ այն ներկայացրել էր որպէս Բունդեսթագի որոշում և նոյն այդ պատճառով էլ չէինք գտնում Բունդեսթագի կայքէջում) արդէն հրատարակել էր որոշման առաջին տարբերակը, իսկ երկրորդ և վերջնական «որոշումը» «թափանցիկ» Գերմանիայում հրատարակուեց աւելի ուշ՝ երկու շաբաթ յետոյ:

Այսուամենայնիւ չպէտք է այս գրառքի դիրքորոշումը անտեսել, քանի որ CDU/CSU կուսակցութիւնները կազմում են ներկայիս իշխանութիւնը, և դա համարեայ գերմանական կառաւարութեան դիրքորոշումն է:

Հարկաւ, մենք բողոքի նամակներ ենք ուղարկել այդ «խօսքի» ազատութեան յառաջամարտիկներին՝ հասցէներին, սակայն ժամանակի սղութեան պատճառով միշտ չէ, որ մեզ յաջողում է թարգմանել և հասցնել այն հայ ընթերցողին, իսկ CDU/CSU-ի «գրառք որոշում»-ը գտնում ենք կարևոր, որովհետև **պարզում է, եթէ Սարկոզին չընտրուի, Գերմանիան ակտիւանալու է Կովկասում, և այդ անդրադարձ է ունենալու Արցախեան հիմնահացի վրա** (ընդգծումը խմբագրութեանն է-Գ.Խ.): Թուրքերն ու ադրբեյջանցիները ունեն իրենց հեռու գնացող վաղեմի երազ-ծրագիրը՝ պանթուրքիզմը, նրանք ունեն դրամական միջոց և վաղնջական բարեկամական կապեր Գերմանիայի հետ, Գերմանիան էլ իր հերթին շահագրգռուած է կասախական գազի և նավթի պաշարներով:

Ահա մեր նամակը CDU/CSU-ին.

«Քրիստոնեայ-դեմոկրատական միութիւն/Քրիստոնեայ- սոցիալիստ միութիւն (CDU/CSU) կուսակցութիւնների Բունդեսթագի խմբակցութեան, արտաքին քաղաքականութեան խմբի նախագահ Պարոն Ֆիլիպ Միսֆելդերին

Platz der Republik 1
11011 Berlin
Email: Phillip. missfelder@bundestag.de

ԼՐԱՏՈՒՄ

CDU/CSU-Բունդեսբազի խմբակցութեան արտաքին քաղաքականութեան աշխատանքային խմբի դիրքորոշման փաստաթուղթը (գրաւոր դիրքորոշումը, որով պաշտօնապէս ներկայացուած է CDU/CSU-ի դիրքորոշումը)
«20 տարուայ հակամարտութիւն Արցախի առնչութեամբ.
նոր խթան հակամարտութեան խաղաղ լուծման համար»:

Շատ յարգելի Պարոն Միսֆելդեր,

Ձեր դիրքորոշման թուղթը մեծ մտահոգութեամբ կարդացի և այն տպաւորութիւնը ստացայ, թէ հեղինակները արտայայտում են մի երկրատարածքի մասին, որի անցեալին և ներկային անտեղեակ են, սակայն գրաւոր դիրքորոշում են ձևակերպում՝ գործնական մատնանշումներով:

Թոյլ տւէք նոյն այդ պատճառով մի կարճ բացատրութիւն: Պատմականօրէն, այսինքն՝ 20-րդ դարից առաջ, Հարաւ-Կովկասում և ընդհանրապէս Ադրբեյջան անունով պետութիւն գոյութիւն չի ունեցել: Ադրբեյջանը Պարսկաստանի նահանգն էր և է՝ Արաքս գետից հարաւ:

Միայն 1918-ին այդ անվանումով ստեղծուեց մի պետութիւն Արաքսի յիսիսարևելքում՝ Կովկասեան Աղուանքում, որպէս կեղծիք, բոլշիւկների և պանթուրքիստների համագործակցութեան արդիւնք: Մինչև անգամ Ազգերի Լիգան չճանաչեց հայերի և պարսիկների հողային հաշիւն մկրտուած այդ պետական կառոյցը: Պարսկաստանը բազմիցս է բողոքել այդ Հարաւ-Կովկասեան պետութեան «Ադրբեյջան» անուան դէմ:

Հայոց Արցախը (թրքերէնով՝ Արարաղ) և Նախիջևանը (չունի Ադրբեյջանի հետ միասնական սահման)՝ հայերով բնակեցուած երկրատարածքները, ռուս-թրքական պարտադրեալ Մոսկւա (1920) և Կարս (1921) պայմանագրով դրուեցին Սովետական Ադրբեյջանի գերիշխանութեան տակ՝ հակառակ սովետառուսական և սովետադրբեյջանական նախկին խօստումներին, թէ Արցախն ու Նախիջևանը որպէս Խորհրդային Հայաստանի տարածքներ կմնան: Համեմատական կարգով հայերը կազմում էին Նախիջևանի բոլոր ազգութիւնների 40%-ը՝ որպէս մեծամասնութիւն, մինչև որ 1920 թ. բռնատեղահանուեցին, իսկ վերջին 4000-6000 հայերը՝ 1988-ին: Յետսովետական ժամանակաշրջանում Ադրբեյջանը սկսեց նաև Նախիջևանում հետևողականօրէն ոչնչացնել հայոց յուշակոթողները՝ որպէս հայերի երբեմնի ներկայութեան վկայութիւն: Ամենաողորբալկանը Ջուղա քաղաքի պատմական գերեզմանոցի ոչնչացումն էր, որտեղ ամենամեծ խաչքարերի և տապանաքարերի աննման հավաքածուն էր գտնուում. շուրջ 6000 օրինակներ, որոնք 1998-ին և 2005-ի դեկտեմբերին հետևողական կարգով ջարդուեցին և ոչնչացուեցին: Հարթեցնելով այդ պաշտամունքի և մշակութային մեծ արժէք ներկայացնող տարածքը՝ վերածեցին այն բանակի վարժանքների հրապարակի, որտեղ թաղուած շուրջ 32 հայ սերունդների ոսկորների վրայ հրածգութեան փորձեր են կատարում:

Գ (Գ) քաղաք, թիվ 1 (37) հունվար-մարտ, 2012

ՎԷԲ համահայկական հանդէս

Արցախում բնակչության 90%-ը կազմում էին հայերը: Այս երկրատարածքի միայն մեկ երրորդը 1922-ին ստացաւ «ինքնաւար մարզի» ստատուս: Արցախի ինքնապաշտպանական բանակի կողմից ազատագրուած տարածքները միասնաբար կազմում են 12.07 քկմ, որը հաւասար է Ադրբեյջանի Հանրապետութեան տարածքի շուրջ մեկ տասերորդին և ոչ թէ, ինչպէս Ձեր գրաւոր դիրքորոշման մէջ սխալաբար պնդում էք, 20%-ին և կամ երկրի մեկ հինգերորդին:

«Ինքնաւար մարզ»-ի հայ բնակչութիւնը 1988 թ., սովետական 1977 թ. Սահմանադրութեամբ և 1991 թ. սեպտեմբերի 2-ի հանրաքւէով յայտարարել է իր անկախութիւնը: Այստեղ երկրորդական է, ինչպէս գրուած է Ձեր գրաւոր դիրքորոշման մէջ, «ոչ Գերմանիան, ոչ էլ ԵՄ... Արցախի 2010 թ. Խորհրդարանական ընտրութիւնները չեն ճանաչել»: Արցախի հայ ազգաբնակչութեան նպատակն էր առաջին հերթին Ադրբեյջանի լծից և խնամակալութիւնից փրկելը: Այս միջոցին Արցախում մի սերունդ է աճել, որը Ադրբեյջանի լուծը բնաւ չի կրել և չի ճանաչում, անկարելի է նրան համոզել ենթարկելու մի պետութեան, որի պաշտօնական սկզբունքներն են «ժողովրդաւարութիւնը», «թրքականութիւնը» և «խլամը»:

Քանի որ ինչ առնչում է ժողովրդաւարութեան, նոյնիսկ յետսովետական, դեմոկրատիային ոչ այնքան սովոր քաղաքացիներն էլ գտնում են հայր ու որդի Ալիևական «նախագահական-դիմաստիա»-ն անպատեհութիւն: Այս «նախագահական դեմոկրատիայում» ընդդիմախօսները կամ իրենց վերագտել են բանտերում և կամ փախել երկրից: Ազատագրկուած ժուռնալիստների քանակով Ադրբեյջանը գտնուում է աշխարհի երկրորդ հորիզոնականում՝ Թուրքիայից յետոյ: Երկրի էթնիկ փոքրամասնութիւնները (որքան դեռ մնացել են) ճնշուած են, իրենց դեկլարներն էլ՝ քննադատ ժուռնալիստների նման ձեռքակալուած:

Իսկ ինչ վերաբերում է թրքականութեանը, ապա հայ ժողովուրդը «ճաշակել» է այն 1915-ի, 1920-ի դժոխային տարիներին և վերջապէս 1988-1990 թթ. Սումգայիթում, Կիրովաբադում, Բաքում և այլուր: Իսկ թրքական իսլամի մասին խօսելը, որը ծառայում է միայն թրքական ազգայնամոլութեանը, լրիւ աւելորդ է:

Իմ վրդովմունքը բխում է այն իրականութիւնից, որ Ձեր փաստաթղթում առանց քաշելու արտացոլուած է գերմանական երկու մեծ կուսակցութիւնների վարքագիծը՝ առաջնորդուած միայն էներգետիկ քաղաքականութեամբ՝ փոխարէն մարդու իրաւունքների հիմնական սկզբունքների:

Ինքն իրեն քրիստոնէայ կոչող կուսակցութիւնը չափաի իր արտաքին քաղաքականութեան գործելաոճում առաջնահերթութիւն տայ սեփական տնտեսական շահերին, «գազամատակարարմանը, խողովակաշարերի ծրագրումների վերարդիականացմանն ու երկարաժամկէտ ապահովմանը», այլ աւելի շատ խորհի արևելեան քրիստոնէայ հանրապետութեան ապահովութեան մասին, որի տարածքը համապատասխանում է Բրանդենբուրգի երկրատարածքին:

«Սինսկի խումբ»-ը այս 18 տարիների ընթացքում հասել է առնուազն այն արդիւնքին, որ Ադրբեյջանը յաւելեալ յարձակումներ չի ձեռնարկել Արցախի դէմ: Այսօր արդէն այդ յանձնախմբի անդամների կազմը բաւարար չափով հաւասարակշռուած չէ և մտահոգութեան տեղիք է տալիս այն առումով, որ 1997-ից այս կողմ Արցախը գրկուած է բանակցութիւններին մասնակցութեան իրաւունքից և Հայաստանը մենակ է Թուրքիայի և Ադրբեյջանի դիմաց: Ապահովութիւնը տուժելու է, որովհետև Դուք առաջարկում էք Ֆրանսիայի փոխարէն ԵՄ-ի մասնակցութիւնը և այսպիսով թուլացնում էք Հայաստանի և հայոց շահերը

Մինսկի խմբում:

Այսուամենայնիւ, փաստաթղթի 7-րդ կէտը ամենաքննադատականն է, որտեղ պահանջում է Թուրքիայի միջամտութիւնը Արցախի հակամարտութեան լուծման հարցում: Թուրքիան (ի միջիայլոց, այն ժամանակուայ Գերմանիայի զինեղբայրը) շարունակ ունեցել է ողբերգական դեր հայ ժողովրդի կեանքում, դրանց թվում՝ Յեղասպանութեան իրագործումը (Գերմանիան ցայսօր էլ չի ճանաչել Հայոց ցեղասպանութիւնը): Թուրքիայի բոլոր կառավարութիւնները՝ քեմալական նացիոնալիստները կամ «չափաւոր» իսլամական AKP-ն, հրաժարում են յանձնառու լինել պատմական պատասխանատութեանը, որը նշանակում է վիճարկում, և ժխտում են Օսմանեան սուլթանութեան՝ աւելի քան երեք միլիոն քրիստոնեայ քաղաքացիների ցեղասպանութիւնը 1912-1922 թթ.:

Հայերի, արամեալեզու քրիստոնեաների/ասորիների, ինչպէս նաև Փոքր Ասիայի և Թրակիայի հոյների բռնագաղթ ու բռնի կերպով քաղաքացիութիւնից զրկում և հետևողական եղանակով մշակոյթային յուշակոթողների կործանում.- այս բոլորը բաղկացուցիչ մասն են Թուրքիայի ցեղասպանական քաղաքականութեան: 1993-ից ի վեր Թուրքիան մասնակցում է ինչպէս Ադրբեյջանի (1989) կողմից Հայաստանի և Արցախի շրջափակմանը՝ ընդդէմ ժողովուրդների իրաւունքների, նոյնպէս էլ Հայաստանի անկախացումից առ այսօր մերժում է դիւանագիտական յարաբերութիւնների հաստատումը:

Արցախը զենքով հպատակեցնելու Ադրբեյջանի փորձին Թուրքիան մասնակցել է 1992-1994 թթ. 2000 կամաւոր արհեստաւարժ բանակայիններով (պաշտօնապէս՝ թոշակի անցածներ), ինչպէս նաև զենքով և զինամթերքով (որոնց ես անձամբ 1991-ի վերջերից առ այսօր իմ 49 ուղևորութիւնների ընթացքում, Բարոնես Բոքսի գլխաւորութեամբ, ականատես եմ եղել և լուսանկարել եմ):

Թուրքիան թէ՛ կրկնացեղասպան է և թէ՛ սերիալ ցեղասպան, քանի որ նա իր քրիստոնեայ քաղաքացիներին ցեղասպանութիւնով 20%-ից (1915 թ.) նազեցրել և ներկայում դարձրել է 1%-ից էլ պակաս: 1937/1938-ին նոյն եղանակով իրականացրել է Տերսիմցիների զանգուածային կոտորածները և բռնատեղահանումները, ինչպէս նաև 1920-ից առ այսօր նոյն ցեղասպան քաղաքականութիւնը վարում է քրդերի նկատմամբ: Կիպրոսում ժողովուրդների իրաւունքին հակառակ բռնագրաւել է երկրի 39%-ը, յարատև յարձակում է յիսիսային Իրաքի վրա և սպառնում Սուրիային ու Յունաստանին:

Եվ հէնց մի այսպիսի պետութիւն՝ պէտք է առաջարկէք մեզ՝ որպէս միջնորդ և խաղաղութիւն հաստատող:

Նկատի առնելով իրական սպառնալիքը, որին ենթակայ են հայերը Թուրքիայում, Հայաստանում և այլուր, ինքնըստինքեան հասկանալի է, որ Հայաստանի բնակչութեան մեծամասնութիւնը ռուսական բանակի ներկայութիւնը ընկալում է որպէս անվտանգութեան երաշխիք: Պատմական փորձից գիտեն հայերը, որ ռուսները ուզում են իշխել Հայաստանում, սակայն թուրքերը ցանկանում են բնաջնջել հայերին:

Եվ այնքան ժամանակ, որքան Արևմուտքը չի ցանկանում և կամ ի վիճակի չէ հայերի գոյութիւնը պահպանել, ռուսական բանակի ներկայութիւնը ողջունելի է:

Ռուսական բանակի ներկայութիւնը Հայաստանում վերացնելը և թուրքերի դերը Արցախեան հակամարտութեան հարցում զօրացնելը գտնում են ոչ թէ նպատակահարմար, այլ յոյժ վտանգաւոր: Իմ հայրենակիցների մեծ մասը Ձեր

կողմնորոշմանը ընթրնողաբար չի սոտենալու և ընկալելու է որպէս միջամտութիւն Հայաստանի ներքին գործերին:

Գուցէ ավելի լավ լինէր CDU/CSU-ի Բունդեսթագի խմբակցութիւնը խորհեր՝ ինչպէ՞ս լուծարքի ենթարկէր ԱՄՆ-ի ռազմաբազաները Գերմանիայում, քանի որ, ինչպէս բոլորին յայտնի է, Գերմանիան, ի տարբերութիւն Հայաստանի և Լեռնային Արցախի Հանրապետութեան, իր հարևանների կողմից չի ենթարկուծ սպառնանքի:

Բարի ողջոյններով՝
դոկտ. Ժիրայր Քոչարեան

Գերմաներենից թարգմանեց՝
պատմ. գիտ. դոկտոր
Աշոտ Ն. Հայրունին

THE PROTEST OF GERMAN SCIENTISTS

The open letters to the parliamentarians of the Bundestag by Jürgen Gispert, Christian Kolter and Gerayr Koutcharian